

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ Հինգշաբթի, Մայիսի 2, 2008

ՀՀԳ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի Յանձնախմբի կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, Ապրիլի 30-ի երեկոյեան ժամը 7:30-ին Գլենդէլի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահում տեղի ունեցաւ հրապարակային քննարկում-հաւաք՝ Ադրբեջանի պետական շրջանակների նորագոյն ոտնձգութիւնների դէմ, որոնք անցնող շաբաթներին ձեռնարկուեցին Արցախի ազատամարտի 20-ամեակի տօնակատարութիւնը Լոս Անջելոսում խափանելու նպատակով: Հաւաքին ներկայ էին ՀՀԳ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Աւետիք Իզմիրլեանը եւ Կ.Կ.-ի անդամները, Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսի տեղակալ Մեսրոպ Շաբոյեանը, ազգային, հասարակական մարմինների, ինչպէս նաեւ հայկական մամուլի ու հեռուստակայանների ներկայացուցիչները եւ բազմաթիւ լոսանջելոսահայեր: Միջոցառման բացումը կատարեց Հանրային Կապի գրասենեակի գործավար Սարո Նազարեանը, որից յետոյ ելոյթ ունեցաւ Կենտրոնական Կոմիտէի մօտ հանրային կապի պատասխանատու ժան Գոսազեանը, որն անդրադարձաւ վերջերս Լոս Անջելոսում Ադրբեջանի գլխաւոր հիւպատոս Էլին Սուլէյմանովի եւ օրեր առաջ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարութեան խափանարարական քայլերին, որոնք ձեռնարկուել են Մայիսի 2-ին Լոս Անջելոսի «Վիլշէր Իբըլ» հեղինակաւոր հանդիսասրահում Արցախի ազատամարտի 20-ամեակի տօնակատարութիւնը արգելելու համար: Շեշտելով, որ նորութիւն չեն հայ ժողովրդի իրաւունքները խախտելու ադրբեջանական թշնամական քայլերը, ժան Գոսազեանը կոչ ուղղեց ներկաներին, որ միասնական կեցուածքով եւ համաժողովրդական ներկայութեամբ կասեցնեն նման ոտնձգութիւնները: Միջոցառման ընթացքում Սարո Նազարեանը ընթերցեց նաեւ Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան Ապրիլի 29-ի մամուլի հաղորդագրութիւնը, որով դատապարտուում էր Լոս Անջելոսում Արցախի ազատամարտի 20-ամեակը նշելու դէմ երրորդ երկրի միջամտութիւնը: Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Արցախի ազատամարտի 20-ամեակի տօնակատարութեան համադրող յանձնախմբի նախագահուհի՝ Բիանկա Մանուկեանը, որը մանրամասնութիւններ յայտնելով Մայիսի 2-ի տօնակատարութեան մասին, կոչ ուղղեց ներկաներին խուռներամ շարքերով ներկայ գտնուել սոյն միջոցառմանը ապացուցելու համար, որ ադրբեջանական խափանարարական ցանկացած քայլ ձախողութեան կը մատնուի հայ ժողովրդի հաստատականութեամբ: Տեղեկացուեց, որ Մայիսի 2-ի տօնակատարութեանը հրաւիրուել եւ գլխաւոր բանախօսի հանգամանքով ելոյթ է ունենալու ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ, ՀՀ Պաշտպանութեան նախկին փոխնախարար, Գեներալ-Լէյտենանտ Արթուր Աղաբեկեանը: Միջոցառման ընթացքում խօսք տրուեց նաեւ ներկաներին, ովքեր իրենց բողոքի ու ցասումի ձայնը բարձրացրեցին Ադրբեջանի պետական շրջանակների դէմ, վերջիհաստատելով իրենց վճռակամութիւնն ու անխորտակ կամքը՝ ազգովի պաշտպանելու եւ ի գին բոլոր զոհողութիւնների զօրավիգ կանգնելու մեր ազատամարտիկների արեամբ ամրագրուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեանը: Ելոյթ ունեցողների թւում ուշագրաւ էր ազգային հերոս, Գետաչէնում նահատակուած Սիմոն Աչիգեօզեանի տիկնոջ խօսքը, որը յիշեց, որ այդ օրը՝ Ապրիլի 30-ը, Աչիգեօզեանի, Թաթուլ Կրպեանի եւ իրենց զինակիցների անշունչ մարմինների Երեւան բերելու տարելիցն էր: Նշենք, որ միջոցառումը ամբողջութեամբ նկարահանուեց եւ նոյն օրը հեռարձակուեց «Հորիզոն» հեռուստակայանով:



Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան զոհերի, իր Երկուշաբթի, Ապրիլի 21-ի նիստը նուիրել էր Հայոց Ցեղասպանութեան 93-րդ տարելիցին: Նիստի բացումը կատարուել է Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Սուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսեանի աղօթքով, որից յետոյ՝ առաջնորդը Սրբացան Հայրը շնորհակալութիւն է յայտնել Կալիֆորնիայի նահանգապետին ու պետական բարձրաստիճան այլ պաշտօնատարների՝ հայ ժողովրդի արդար իրաւունքների նկատմամբ իրենց ցուցաբերած յանձնառու կեցուածքի համար: Նիստի ընթացքում ելոյթ են ունեցել նահանգային խորհրանախ անդամներ Փօլ Գրիգորեանը, Գրեգ Աղազարեանը եւ հայասէր այլ

պատգամաւորներ, որոնք ոգեկոչելով հայութեան մէկուկէս միլիոն զոհերի յիշատակը ընդգծել են Ցեղասպանութեան ճանաչման ու հայութեան իրաւունքների հաստատման անհրաժեշտութիւնը : Նրանք նաեւ կոչ են ուղղել պաշտօնական Վաշինգտոնին, որ վճռական քայլեր ձեռնարկի Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ: Այնուհետեւ, խորհրդարանը միաձայնութեամբ վաւերացրել է թիւ 24 բանաձեւը, որը ոգեկոչում է Հայոց Ցեղասպանութիւնը ու յարգանքի տուրք մատուցում՝ հայութեան նահատակներին: Պաշտօնական միստից յետոյ, առաջնորդ Սրբաջան Հայրը եւ իրեն ընկերակցող Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել Կալիֆորնիայի խորհրդարանի անդամներ Քելըն դէ Լէոնի, Էնթոնի Փորթանթինոյի եւ այլ պատգամաւորների հետ, բարձր գնահատելով նրանց կեցուածքը հայութեան իրաւունքների եւ ընդհանրապէս արդարութեան տիրակալութեան նկատմամբ :

Նշենք, որ նոյն օրը, Կալիֆորնիայի նահանգային Սենատը եւս միաձայնութեամբ վաւերացրել է յիշեալ բանաձեւը եւ այդ միստին բացման աղօթքը կատարել է Հայաստանեայց եկեղեցւոյ Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը:



Հինգշաբթի, Ապրիլի 24-ի երեկոյեան ժամը 4-ին, հազարաւոր հայեր եռագոյն դրօշներ պարզած իրենց բողոքի եւ ցասունի ձայնը բարձրացրեցին Լոս Անջելոսում Թուրքիայի հիւպատոսարանի առջեւ, շեշտելով, որ Հայոց Ցեղասպանութիւնից 93 տարի անց, այլեւս ժամանակը հասունցել է վերջ դնելու Թուրքիայի ուրացման քաղաքականութեանը եւ արդար հատուցում տալու հայ ժողովրդին: Ոստիկանական տուեալների համաձայն, շուրջ 15 հազար հայ ցուցարարներ են մասնակցել Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կազմակերպած այս տարեկան ցոյցին: Ցուցարարների թւում էր 101-ամեայ վերապրող Ղազարոս Քատեմեանը, որի անձնական բողոքագիրը ընթերցուեց ցոյցի ընթացքում: Միռոցառմանը ելոյթ ունեցան Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանը, ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի վարիչ- գործավար Անդրանիկ Քիզիբեանը, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Կենտրոնական վարչութեան նախագահ Գասպար Գիւլէլեանը եւ Կրթական հարցերով յանձնախմբի պատասխանատու Սարո Հարունը, ովքեր շեշտեցին, թէ ցուցարարները պարզապէս իրենց ներկայութեամբ ապացուցեցին, որ հայութիւնը բնաջնջելու Հայոց Ցեղասպանութեան կազմակերպիչների ծրագիրը ձախողուել է:



Իր պաշտօնավարութեան ութերորդ եւ վերջին ժամանակաշրջանում, Միացեալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշը, դարձեալ խուսափողական դիրք որդեգրեց եւ չօգտագործեց «ցեղասպանութիւն» արտայայտութիւնը, Հինգշաբթի, Ապրիլի 24-ին, Հայոց Ցեղասպանութեան 93-րդ տարելիցի առիթով հրապարակած իր յայտարարութեան մէջ: «Այս տարուայ Ապրիլի 24-ին, նախագահ Բուշը իր պաշտօնավարութեան վերջին շրջանին, կատարելագործեց ութ տարի տեւած իր անհաւատարմութեան կեցուածքը, որը վերաբերում է Հայոց Ցեղասպանութիւնը ըստ արժանւոյն ճանաչելու իր ընտրարշաւի ժամանակ հրապարակած յանձնառութեանը»,- անդրադառնալով նախագահ Բուշի յայտարարութեանը ասել է ՀՅԴ Դատի Յանձնախմբի Վաշինգտոնեան գրասենեակի գործադիր տնօրէն Արամ Համբարեանն ու աւելացրել,- «Նախագահը ո՛չ միայն չյարգեց Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու իր խոստումը, այլ նաեւ կիրառեց Սպիտակ Տան լիրաժեք ուժը խոչընդոտելու Կոնգրէսին, որպէսզի այն չձեռնարկի հենց նոյն քայլերը, որոնք ինքն էր խոստացել իրագործել նախագահական թեկնածութեան իր քարոզարշաւներում: Նա ո՛չ միայն աշխատանքից հեռացրեց դեսպան Ջան Էվանզին, որը քաջութիւնն ունեցաւ յարգելու իր իսկ նախագահի դրժած խոստումը՝ արդարօրէն խօսելով Հայոց Ցեղասպանութեան մասին, այլ դրանից յետոյ նախագահ Բուշը առաջադրեց ցեղասպանութիւնը ուրացող Հոգլանդի թեկնածութիւնը, դեսպան Էվանզին փոխարինելու համար: Նախագահ Բուշը ո՛չ միայն որդեգրեց հակահայկական ակնյայտ քաղաքականութիւններ իր պաշտօնավարութեան երկու ժամանակաշրջաններում, այլ հայութեան հարցերի վերաբերեալ օտարերկրեայ ղեկավարների հետ ունեցած իր բազմաթիւ հանդիպումների ժամանակ, երբեք չփորձեց այդ հարցերը քննարկել ամերիկահայ համայնքի ղեկավարների հետ»:

Նշենք, որ նախագահ Բուշը իր յայտարարութեան մէջ «ցեղասպանութեան» փոխարէն գործածել է «զանգուածային սպանութիւններ» արտայայտութիւնը:



Չորեքշաբթի, Ապրիլի 23-ին Միացեալ Նահանգների Կոնգրեսի Հայկական հարցերով յանձնախմբի կազմակերպութեամբ Կոնգրեսի շէնքում տեղի է ունեցել է ոգեկոչման յատուկ միջոցառում, նուիրուած Հայոց Ցեղաստանութեան 93-րդ տարելիցին: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Ներկայացուցիչների Տան խօսնակ Նանսի Փիլոսին, որը շեշտել է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը եւ իր յարգանքն է մատուցել Հայոց Ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոն հայ նահատակների յիշատակին: Իր պերճախօս ելոյթում տիկին Փիլոսին ներկաներին ցոյց է տուել ամերիկեան հեղինակաւոր թերթերից «Նիւ Եօրք Թայմզ»-ի 2007 թուականի Հոկտեմբերի 11-ի համարի առաջին էջը, ուր ընդարձակ հաղորդագրութիւն էր հրատարակուել նախորդ օրուայ՝ 2007 թուականի Հոկտեմբերի 10-ին Ներկայացուցիչների Տան արտաքին յարաբերութիւնների հարցերով յանձնաժողովի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող թիւ 106 բանաձեւի ընդունման վերաբերեալ եւ հաղորդագրութեան կողքին զետեղուել էր բանաձեւի ընդունման նիստին մասնակցած չորս վերապրողների լուսանկարները, որոնցից մէկը՝ 93-ամեայ Իսկուիի Վասիլեանը վախճանուեց այս տարուայ սկզբներին: Տիկին Փիլոսին յանձնաժողովին կոչ արեց վաւերացնել բանաձեւը եւ յայտարարեց, թէ այդ ուղղութեամբ բաւականին շատ աշխատանք պէտք է կատարուէր: «Ինձանից յաճախ հարցնում են, թէ ինչո՞ւ պէտք է անդրադառնալ տասնամեակներ առաջ տեղի ունեցած Հայոց Ցեղասպանութեանը: Իմ պատասխանը միշտ եղել է այն, որ եթէ մենք անտեսենք պատմութիւնը, ապա մենք նախասահմանում ենք դրա կրկնումը»,- ասել է տիկին Փիլոսին եւ հաստատել է, որ Հայոց Ցեղասպանութիւնից շուրջ 100 տարի անց, դեռ մինչեւ այսօր ցեղասպանութիւններ են տեղի ունենում Ռուանդայում եւ Դարֆուրում: «Քանի շարունակոււմ է ցեղասպանութիւնը, մենք պէտք է երաշխաւորենք, որ բոլոր ցեղասպանութիւնները ճանաչոււմ եւ ոգեկոչոււմ են ըստ արժանւոյն»,- յայտարարել է Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան խօսնակ Նանսի Փիլոսին եւ խօստացել է պայքարել ու շարունակել իր ջանքերը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ եւ միւսներին եւս յողորել է նոյնն անել:

Այս լուրերը տրամադրոււմ են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: